Արձանագրություն N 4

«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/15» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան **19.04.2019 թ.**
ժ. 11:00

Մասնակցում էին.
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Սուքիասյան
Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Մարտիրոսյան
Ա. Ավետիսյան
Հ. Խեչումյան
Ռ. Պողոսյան
Ն. Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝

1. **«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/15» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան մասնակցի որակավորման պահանջները հիմանավորող փաստաթղթերը գնահատելու մասին**

(Տ. Սուքիասյան)

Ընդունել ի գիտություն, որ.

ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ հարցման մասին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից **16.04.2019 թ.** տրամադրվել է համապատասխան տեղեկատվություն:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝ **Հ. Թումանյանի թանգարան** և **Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան ՊՈԱԿ**-ների կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **Հ. Թումանյանի թանգարան ՊՈԱԿ-ի** մասնակցության իրավունքը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան ՊՈԱԿ**-ի մասնակցության իրավունքը չի համապատասխանում հրավերի պահանջներին. մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.3 Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ **«Հ. Թումանյանի թանգարան և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան ՊՈԱԿ-ների** կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում է հրավերով սահմանված հրավերում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

1.3 Հանձնաժողովը որոշեց գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/15» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման, ընտրված մասնակցին որոշելու և արդյունքների ամփոփման մասին

(Տ. Սուքիասյան)

2.1 Հիմք ընդունելով գնահատման թերթիկները հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ **Հ. Թումանյանի թանգարան և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան ՊՈԱԿ-ների** հայտի գնահատման արդյունքները.

Հ/Հ	Մասնակից	Գնահատականը
14	Հ. Թումանյանի թանգարան ՊՈԱԿ	բավարար
15	Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան ՊՈԱԿ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց մերժել Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան ՊՈԱԿ-ի հայտը՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ինչպես նաև «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/15» ծածկագրով գնման ընթացակարգի 7.16-րդ կետը՝ լիազորված մարմին ուղարկել Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան ՊՈԱԿ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով: Ընդ որում կարգի 45-րդ կետով, ինչպես նաև «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/15» ծածկագրով գնման ընթացակարգի 7.16-րդ կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.4 «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց ընթացակարգի **14-րդ** չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել **Հ. Թումանյանի թանգարան ՊՈԱԿ**-ին՝ որպես բավարար գնահատված հայտ և ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.5 Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի **15-րդ** չափաբաժինը հայտարարել չկայացած՝ հայտերի հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.6 Հանձնաժողովը որոշեց.

1) Հաստատել «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/15» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

2) "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին

հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3) Անգործության ժամկետի ավարտից հետո ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ընտրված մասնակիցների հետ համապատասխան չափաբաժինների մասով կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2.7 Հանձնաժողովը որոշեց.

«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/15» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագիրը կնքելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրը, ժամը 11:00-ին, Վազգեն Սարգսյան 3,Կառավարական տուն 2, ՀՀ մշակույթի նախարարություն 6-րդ հարկ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Տ. Սուքիասյան
Անդամներ՝		Հ. Մարտիրոսյան
		Ա. Ավետիսյան
		Հ. Խեչումյան
		Ռ. Պողոսյան
Քարտուղար՝		Ն. Կարապետյան